

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ

ԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
ՇԵՔՍՊԻՐԻ ՊԻԵՍՆԵՐՈՒՄ**

Ժ.02.07 - «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Աստենախոսության թեման հաստատվել է Երևանի Վ. Բյուռուղի անվան պետական լեզվաբանական համալսարանում:

Գիտական դեկավար՝

Բ.Գ.Բ., դոցենտ Հ.Ս. Քաջբերոնիք

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Բ.Գ.Դ., դոցենտ Ա.Հ. Զիվանյան

Բ.Գ.Բ., դոցենտ Ս.Ս. Քաղբասարյան

Առաջատար կազմակերպություն՝

Խ. Արովյանի անվան
հայկական պետական
մանկավարժական համալսարան

Աստենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013 թ. դեկտեմբերի 20 -ին,
ժամը 11.00-ին, ՀՀ ԲՈՀ-ի՝ ԵՊՀ-ում գործող 009 «Գերմանական լեզուներ»
մասնագիտական խորհրդի կիսում (Այեք Մանուկյան):

Աստենախոսությանը կարելի է ծանրթանալ ԵՊՀ գրադարանում:

Անդմազիքն առարկան է 2013 թ. նոյեմբերի 19-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական թարառության

պ.գ.դ., պրոֆեսոր՝

Ռ. Կոչ Եղիշյան

Ե.Լ. Երգելյան

Սույն ատենախոսությունը նվիրված է Շեքսպիրի պիեսներում բառակազմական միջոցների գործաբանական և ոճական առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Աշխատանքում ուսումնասիրվում են Շեքսպիրի օգտագործած բառակազմական միջոցների՝ փոխարկման, ածանցման և բառաբարդման հիմքում ընկած գործաբանական և ոճական գործառությունները, ինչպես նաև փոխարկման, ածանցման և բառաբարդման բառախաղային հայեցակերպ: Փորձ է արվում վեր հանել Շեքսպիրի պիեսներում գործածված բառակազմական միջոցների գործաբանական և ոճական արժեքը:

Շեքսպիրի ստեղծագործությունների վերաբերյալ կատարվել են շատ ավելի խորը ուսումնասիրություններ առավելապես թատրական, պատմական, մշակութային և գրականագիտական ոլորտներում: Լեզվաբանների և գրականագետների վերջին աշխատությունները շեքսպիրագիտության մեջ նշանակալի և հեռանկարային են (D. Crystal (2004, 2008), P. Canning (2012), S. Adamson et al. (2001), T. Nevalainen (2001, 2006), A. Thompson (2001), L. Magnusson (2001), L. Maguire (2007), L. Maguire and E. Smith (2013), J. Hope (2007), R. MacDonald (2006), V. Salmon (2007), P. Parker (1996), M. Ravassat (2011)):

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է այսօր շեքսպիրագիտության մեջ նախընտրելի բազմահեռանկարային հետազոտությունների պահանջարկով: Աշխատանքն ուրույն փորձ է լրացնել բազմայն ավանդություններ ունեցող շեքսպիրագիտությունը ոճագործաբանական ուսումնասիրությամբ՝ այս կերպ հարստացնելով այս ոլորտում արդեն իսկ առկա հետազոտությունները նորաբանավորուների բազմակողմանի դիտարկմամբ:

Սույն հետազոտության նպատակն է ուսումնասիրել Շեքսպիրի ստեղծագործություններում կիրառված բառակազմական միջոցները՝ բացահայտելով դրանց դերը Շեքսպիրի ստեղծագործությունների գործաբանական ազդեցության համատեքստում: Աշխատանքի նպատակն իրագործելու համար առաջարկվել են որոշակի խնդիրներ.

- 1) հնարավորինս համակարգված ձևով ներկայացնել բառակազմության դերը, հետազոտման մեթոդները և նույնացնելու սովորական և եվրոպական լեզվաբանության մեջ;
- 2) վեր հանել Շեքսպիրի լեզվի և ոճի յուրահատկությունները՝ դրանք դիտարկելով իրենց գրական, թատերական, հասարակական և պատմական համատեքստում;
- 3) հատկորոշել բառակազմական այն միջոցները, որոնց Շեքսպիրը բավականին ճկուն կիրառություն է տվել: Այդ նորաբանություններն իրենց հերթին կամ սահմանափակվել են տվյալ իրավիճակով, կամ մեծ մասամբ մասսայական կիրառություն են ստացել լեզվակիրների կողմից և ներգրավվել առօրյա բառապաշար:

- 4) դիտարկել Շեքսպիրի գործածած բառակազմական միջոցների բառախաղային հայեցակերպ՝ մի կողմից որպես լուսիկ լեզվաբանության¹ միջոց, մյուս կողմից կատարելով բառախաղային գործառույթ համատեքստում;
- 5) մշակել Շեքսպիրի գործածած բառակազմական միջոցների ոճագործաբանական գործառույթները՝ վեր համեմու նորարարական կազմությունների գործաբանական ազդեցությունը;
- 6) վերլուծել Շեքսպիրի գործածած բառակազմական միջոցների ոճագործաբանական հայեցակերպ՝ բազմակողմանիորեն դիտարկելով փոխակերպման, ածանցավոր և բարդ բառերի գործածությունները Շեքսպիրի բոլոր 39 պիեսներում:

Ուսումնասիրության առարկան Շեքսպիրի կողմից կիրառված բառակազմական միջոցներն են, որոնք դիտարկվում են ոճագործաբանական տեսանկյունից: Աստեղաբառը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում փոխակերպման, ածանցյալ և բարդ բառերում ոճագործաբանական գործառույթներին և բառախաղային հայեցակերպին: Սույն աստեղաբառության մեջ ներկայացված է բառակազմական միջոցների 811 օրինակ, որոնցից 289-ը վերլուծության տեսքով և 522-ը՝ հավելվածներում: Որպես փաստացի նյութ՝ ուսումնասիրվել են Շեքսպիրի բոլոր 39 պիեսները: Պիեսների տեքստը վերցուել ենք Դեյվիդ և Բեն Քրիստալների www.shakespeareswords.com կայքից, որը նրանց համահեղինակած՝ Շեքսպիրյան ուսումնասիրությունների մեջ համատարած նախապատվություն վայելող Shakespeare's Words: A Glossary and Language Companion բառարանի թեմատիկ կայքն է: Յեղինակները օգտագործել են 37 պիեսների տեքստերը Penguin հրատարակչությամբ, իսկ Cymbeline պիեսի տեքստը՝ Նոսուորդի և Edward III պիեսի տեքստը՝ Զիորջին Սելքիրիի խմբագրությամբ:

Դ. Քրիստալը Շեքսպիրի նորաբանությունների ոլորտում կատարել է համակողմանի հետազոտություն՝ որպես դրանք որպես ուիլյամիզմներ²: Աստեղաբառության մեջ ուիլյամիզմները նշված են աստղանիշով, որոնց մասին տեղեկատվությունը բաղկած է Քրիստալի www.thinkonmywords.com կայքից:

Շեքսպիրի բառակազմության ուսումնասիրությունը մինչ այժմ հիմնված է եղել Շեքսպիրի նորաբանությունների կառուցվածքային հատկանիշների (օր.)

¹ Ludic Linguistics-ը սահմանում է բառախաղի ուսումնասիրության տիրույթը: Եզրույթն առաջին անգամ օգտագործել է Դ. Քրիստալը (Crystal D. Language Play, Oxford: OUP, 1998):

² Williamisms-ը Դ. Քրիստալի նորարարական եզրույթն է՝ սահմանելու Շեքսպիրյան նորաբանությունները (Crystal 1997 <http://www.davidcrystal.community.librios.com/?fileid=4214>): Այսոր եզրույթը լայն տարածում է գտնել շեքսպիրագիտության մեջ:

Salmon 2004³) կամ դրանց ստուգաբանական պատմության վրա (օր.՝ Hulme 1962⁴): Սույն հետազոտության գիտական նորույթն այն է, որ այստեղ ուսումնասիրվում է բառակազմությունը՝ ոճագործաբանական տեսանկյունից: Տվյալ մոտեցման նպատակն է վեր հանել շեքսափիրյան բառակազմական միջոցների ոճական գործածությունների (usage) և նորաստեղծ բառերի (coinage) ոճագործաբանական գործառույթները:

Աշխատանքում կիրառվել են հետևյալ մեթոդները՝ ինդուկտիվ, համատերստային, Դ. Քրիսթալի մշակած նկարագրություն-բացատրություն-բացատրություն-նկարագրություն⁵ և վիճակագրական մեթոդները:

Աշխատանքի տեսական արժեքը պայմանավորվուն է նրանով, որ այն Շեքսափիրի օգտագործած բառակազմական միջոցների բազմակողմանի ուսումնասիրություն է՝ համահունչ ժամանակակից բազմահեռանկարային, միջգիտակարգային հետազոտական մոտեցումներին:

Աշխատանքի գործնական արժեքը պայմանավորված է այն փաստով, որ կատարված վերլուծությունը կիրառելի է ինչպես անգլերենի բառագիտության, այնպես էլ Շեքսափիրի լեզուն և ոճը քննող գործնական դասընթացներում:

Աշխատանքի փորձաքննությունը: Ասենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնում, Սեծ Քրիտանիայում կայացած 3 գիտաժողովներում և ներկայացվել են 3 հոդվածում:

Սույն աշխատանքն ունի հետևյալ կառուցվածքը՝ Ներածություն, Երեք գլուխ, Եզրակացություն, Շղումներ, Հավելվածներ:

Առաջին գլուխը «Ժամանակակից բառակազմության զարգացման հիմնական ուղղություններ», բաղկացած է Երեք Ենթագլխից: Այստեղ ուսումնասիրվում են անգլերենի բառակազմության վերաբերյալ տարրեր տեսությունները խորհրդային և արևմտյան լեզվաբանության մեջ: Դիտարկվում են ժամանակակից լեզվաբանության մեջ բազմահեռանկարային մոտեցումների կարևորությունը և դրանց արդյունավետ կիրառելիությունը բառակազմության ոլորտում: Սույն գլուխում դիտարկվում ենք ոճագործաբանական հայեցակերպ: Ոճագործաբանական հայեցակերպը բաղկացած է ոչ միայն գործաբանական և ոճական տարրերից համապատասխանաբար, այլ կարող է ընդգրկել այլ՝ հնչյունաբանության, շարահյուսության և լուրջիկ լեզվաբանության տիրույթները, որոնք կարող են լույս սփյուռք Շեքսափիրի բառակազմական միջոցների

³ Salmon V. Some Functions of Shakespearian Word-Formation // Shakespeare and Language. ed. Catherine M. S. Alexander. Cambridge: CUP, 2004.

⁴ Hulme H. Explorations in Shakespeare's Language. New York: Barnes & Noble Inc., 1962.

⁵ D. Crystal's **DEED** (Description-Explanation-Explanation-Description) method. Crystal D. Speaking in Deeds // English Drama Media, 4, 2005.

<http://www.davidcrystal.community.librios.com/?fileid=-4947>

համատեքստային վերլուծության վրա: Ուսումնասիրելով լեզվի՝ Բառւերի, Բյուլերի, Յակոբոսնի և Քրիստալի առաջադրած գործառույթները՝ ընտրել և մշակել ենք Շեքսպիրի բառակազմական նիշոցների հիմք ոճագրիչաբանական գործառույթ:

Դամատեքստային գործառույթը նկատելի է Շեքսպիրի բազում նորարական բառերում, որոնց կազմության ազդեցությունը կախված է համատեքստի իմաստի վերհանումից: Կազմության նշանակությունը ծավալվում է իր բառային շրջանակներից դուրս և անցում կատարում դեպի արտավեզվական հարթույթ, որը կարող է սահմանափակվել տվյալ իրադրությամբ կամ ավելի լայն՝ տեսարանի և նույնիսկ ողջ պիեսի համատեսքուվ:

Դուզարտահայտչական գործառույթը ակնհայտ է այն կազմություններում, որտեղ կերպարը գտնվում է հուզական վիճակում կամ օգտագործում է տպավորիչ ճարտասանական խոսք՝ ազդելու հասցեատիրոջ զգացմունքների վրա: Շատ հաճախ երկու գործընթացներն ի հայտ են գալիս միասին: Այն կազմությունները, որոնք կատարում են **հուզարտահայտչական գործառույթը**, որպես կանոն հանդիպում են լարված դրամատիկ համատեքստերում, և զարմանալի չեն, որ նրանցից շատերը նորաբանություններ են:

Բամաստեղծական գործառույթը սովորաբար ի հայտ է գալիս ձևաբանորեն ավելի բարդ կազմություններում: Զարմանալի չեն, որ բանաստեղծական գործառույթը դրսևորվում է Շեքսպիրի գործածած այն կազմություններում, որոնք փոխաբերական մակդիրներ են:

Մետալեզվական գործառույթը կարող է դրսևորվել ուղղակիորեն և անուղղակիորեն: Եթե կերպարը մեկնաբանում է բարի կիրառումը, որը սովորաբար հանդիսանում է գալիս որպես դիպվածային բառ, գործառույթը ուղղակի է: **Մետալեզվական գործառույթը անուղղակի** է, եթե Շեքսպիրն է իր լեզվական դիտարկումներն արտահայտում, այլ ոչ թե կերպարը: Անուղղակի մետալեզվական գործառույթը իր էլուրանք օգնում է հասկանալու Շեքսպիրի մետալեզվական մտածողությունը:

Բառախաղային գործառույթը Շեքսպիրի նորարարական շատ գործածություններում իրացվում է հենց բառախաղային ազդեցության նպատակով: Բառախաղը Շեքսպիրի ամբողջ լեզվական ստեղծագործական մտքի անմիջական բաղադրիչն է, որը իրականանում է նաև բառակազմության նիշոցով:

Համաձայն Քրիստալի հաշվարկների՝ Շեքսպիրն առաջին օգտագործողն է մոտ 1700 բառի, որոնցից 800-ը մինչ օրս օգտագործում ենք ժամանակակից անգլերենում (Crystal 2008⁶): Սրանք հայտնի են որպես ուկյամիզմներ՝

⁶ Crystal D. Think on My Words: Exploring Shakespeare's Language. Cambridge: CUP, 2008.

Քրիսթալի նորաբանական տերմինաբանություն: Դրանք ըստ էության Շեքսպիրյան նորաբանություններ են: Յամատեքստում սրանցից շատերը դիպվածային բառեր են: Այսպիսով՝ ուկյամիզմները հանդիպում են երկու հարթությով. դրանցից շատերը այսօր բառարաններում արձանագրված բառեր են, որոնք ոչ մի ոճագործաբանական արժեք չեն ներկայացնում, ինչպես *eye glass, bed room, alligator, fashionable, assassination, uneducated, linguist* և այլն: Կան նաև ուկյամիզմներ, օրինակ՝ *god v., unsex v., uncle v., askance v., loose-wived, skyey, vasty* և այլ, որոնք բացի նորաբանություն լինելուց, դիպվածային բառեր են՝ օժտված ուժեղ ոճագործաբանական հատկությամբ:

Երկրորդ գլուխը՝ «Շեքսպիրի լեզվի բառակազմական յուրահատկությունները», բաղկացած է երեք ենթագլխից: Այս գլխում մեկնաբանվում է Շեքսպիրի լեզուն իր անմիջական պատմամշակութային համատեքստում: Ուսումնասիրվում է բառախաղային ներուժը Շեքսպիրի բառակազմության մեջ և բացահայտվում է վերջինիս բառախաղային գործառույթը և կապը լուղիկ լեզվաբանության հետ: Նույն գլխում քննության ենք առնում նաև լեզվի այն հիմք մակարդակները, որոնք ընկած են Շեքսպիրի պիեսներում բառակազմական միջոցների կիրառնան հիմքում: Դրանք են իմաստային տաղաչափական, շարահյուսական, մետածարանական և հմչողության մակարդակները:

Երրորդ գլուխը՝ «Շեքսպիրի բառակազմական միջոցների ոճագործաբանական արժեքը», բաղկացած է երեք ենթագլխից: Այս գլխում վերլուծում ենք փոխարկման 30 օրինակ, իսկ 522-ն ընդգրկված են Յավելվածներում: Շատ դեպքերում փոխարկումը հնարամիտ գործածություն է, այլ ոչ թե նոր կազմված բառ՝ որպես այդպիսին: Փոխարկման առավել հաճախակի հանդիպող կաղապարները դրսկորված են գոյակաների միջոցով, որոնք ծառայում են որպես բայեր: *The Merry Wives of Windsor* պիեսում Ֆալստաֆը հայրությամբ լի պարծենում է Տիկին Ֆորդի՝ իր հանդեպ տածած կեղծ համակրանքով:

FALSTAFF

MW.I.iii.39 ... Briefly, I do mean to make love to

MW.I.iii.40 Ford's wife. I spy entertainment in her. She discourses,

MW.I.iii.41 she carves, she gives the leer of invitation. I can construe

MW.I.iii.42 the action of her familiar style; and the hardest voice

MW.I.iii.43 of her behaviour – to be *Englissed* rightly – is 'I am

MW.I.iii.44 Sir John Falstaff's.

Բառն ունի **հոլգարտահայտչական գործառույթ**, քանի որ ֆոլստաֆը ձգտում է իր գրուցակիցներին թվակ շատ տպավորիչ և, որ իր համար բացարձակ խնդիր չէ, հրապութել Ֆորդի կնոջը: Այս փոխարկումը հանդես է գալիս որպես իր խոսքի դրամատիկ գագարնակետ: Նա կարող էր ասել “to say more plainly” կամ

“to be more precise”, բայց փոխարենը նա որոշում է օգտագործել *English* բառը՝ որպես բայց և դրանվ իսկ լեզվականորեն այնքան հզոր թվալ, որքան թվայցալ հզոր է ինքը իր ձեռնարկած սիրագործությունների մեջ: Շեքսպիրն առաջինը չէ, որ օգտագործել է *English* բառը որպես բայց. կա ավելի վաղ մեջքերում Վիթլիֆի Ասվածաշնչից /14-րդ դար/ «Քարգմանել անգլերեն» իմաստով, նշում է CDE⁷-ն (Barnhart 2008): Սակայն, շնորհիվ այս համատեքստային յուրահաստուկ իմաստի, Ֆալստաֆի հնարքն իմաստային տեսակետից մնում է նախադեպը չունեցող: Լեզվական տեսանկյունից Ֆոլստաֆը Շեքսպիրի ամենահնարաժիտ և ամենահիշարժան կերպարներից է: Այս կառույցն ունի նաև անուղղակի **մետալեզվակամ գործառույթ**, որը նկատելի է դառնում, եթե Շեքսպիրը *Պիստոլի* կիսալուրջ պատասխանի միջոցով անմկատ ներմուծում է իր սեփական անուղղակի մեկնարանությունը՝ շեշտելով բարի նորարարական, ոչ վիթլիֆյան գործածությունը:

MW.I.iii.45 He hath studied her will, and *translated* her will –

MW.I.ii.46 out of honesty into English.

King Lear պիեսում Ֆրանսիայի թագավորը հետևյալ ձևով է ավարտում իր խոսքը, եթե իր կամքով առանց օժիտի և լիրի օրինության կնության է առնում Կորդելիային:

FRANCE

KL.I.i.260 Bid them farewell, Cordelia, though unkind.

KL.I.i.261 Thou lovest **here***, a better **where** to find.

Գոյականների նշանակությունը իմաստային տեսակետից նոյնն է, ինչ մակրայներինը. այստեղ հատկանշական է շարահյուսական ծկունությունը: Մակրայ *here*-ը գալիս է դեռ Յին Անգլերենի *hēr*-ից, առաջին անգամ հանդիպել է *Beowulf* Բում 725 թ. (Barnhart 2008), բայց 1605-08 թթ. գրված King Lear պիեսում այս “հասարակ” անգլերեն բառը ձեռք է բերում նոր շարահյուսական և գործարանական արժեք: *Where*-ը որպես գոյական օգտագործվել է Շեքսպիրից առաջ, ինչպես նշվում է CDE-ում, դեռևս 1445թ.-ից առաջ (Barnhart 2008): Շարահյուսական սահմանափակումը այստեղ ակնհայտ է, և նկատելի է շատ քիչ բարիմաստային փոփոխություն: Կազմություններն ունեն **համատեքստային գործառույթ**: Այն, ինչ Ֆրանսիայի թագավորը փոխանցում է այս երկու փոխարկման միջոցով, այն ամենն է, ինչ համապատասխանաբար կա այս երկու թագավորություններում՝ Անգլիայի և Ֆրանսիայի: Երկու կիրառություններն ել ինչում են հավասարապես նորարարական և տպավորիչ՝ գործածվելով պիեսի ամենալարված տեսարաններից մեկում:

⁷ Chambers Dictionary of Etymology (CDE). ed. Robert Barnhart. Finland: W.S. Bookwell Ltd., 2008.

Շեքսպիրը կարևորում է մեկ այլ պատճառ, թե ինչո՞ւ և երբ ենք կիրառում գործառույթային փոփոխումը մեր խոսքում: The Merry Wives of Windsor պիեսում Շեքսպիրն օգտագործում է փոխարկումներ՝ պատկերելու ուելսի քահանա պարոն Յոյ Եվանի և ֆրանսիացի բժիշկ Կայուսի տան տնտեսուհու՝ տիկին Քուիթլիի անկատար անգլերեն խոսքը: Դուքս բերված օրինակներն հետևյալն են՝

description	MW.I.i.200	Master Slender, I will / description the matter to you, if you be capacity of it. (Evans)	
Affection	MW.I.i.211	But can you affection the 'oman? (Evans)	
Capacity	MW.I.i.200	Master Slender, I will / description the matter to you, if you be capacity of it. (Evans)	
absence	MW.II.ii.81	her husband will be absence from his house between ten and eleven (Mistress Quickly)	
Discretion	MW.I.i.235	It is a fery discretion answer (Evans)	
remembrance	MW.III.iii.224	I pray you now, *remembrance tomorrow on the / lousy knave, mine host. (Evans)	*remember
Simplicity	MW.IV.i.28	You are a very simplicity 'oman. (Evans)	
peace	MW.IV.i.28 MW.IV.i.24	I pray you peace. (Evans) Peace your tattlings. What is 'fair', William? (Evans)	
Lunatics	MW.IV.i.64	'Oman, art thou lunatics? (Evans)	

3-րդ գլխում ուսումնասիրում ենք նաև Շեքսպիրի պիեսներում երեք ամենից հաճախ կրկնվող ածանցներ՝ *un-*, *-ish*, *-y'* վեր հանելու Շեքսպիրի նորարարական կազմությունների ոճագործարանական արժեքը: Ասենախսության այս գլխում վերլուծված է 106 ածանցավոր բառ: Պետք է ընդգծել, որ Շեքսպիրը հատկապես հնարամիտ է նայենի ածանցների առումով, մինչդեռ նրա ժամանակակիցներից շատերը օգտագործում են լատինական ածանցներ կամ փոխառված բառեր:

Ամենացայտուն ածանցներից մեկը, որը զգալի հաճախականությամբ ի հայտ է գալիս Շեքսպիրի ստեղծագործություններում, նախածանց *un-* է: Համաձայն OED-ի՝ Քրիստոն հաշվարկում է, որ Շեքսպիրն առաջին գրանցված օգտագործողն է 314 *un-*-նախածանցով սկսվող կազմությունների:

Բառախաղայիմ և ուղղակի **մետալեզվակամ գործառույթների** իրացման ակնհայտ օրինակ է մանրախնդիր ուսուցիչ Յոլոֆերնեսի խոսքը: Յոլոֆերնեսն իր տարերի մեջ ցույց է տալիս իր ինտելեկտուալ գերակշռությունը Կոնստաբը Դալի նկատմամբ.

DULL

LLL IV.ii.12

'Twas not an awd grey doe, 'twas a pricket.

HOLOFERNES

LLL IV.ii.13

Most barbarous intimation! Yet a kind of insinuation, as it were, *in via*, in way, of explication;

LLL IV.ii.14

facere, as it were, replication, or, rather, *ostentare*, to show, as it were, his inclination – after his *undressed*,

LLL IV.ii.15

unpolished, uneducated, unpruned, untrained*, or,

LLL IV.ii.16

unlettered, or, ratherest, *unconfirmed* fashion

LLL IV.ii.17

rather, *unlettered*, or, ratherest, *unconfirmed* fashion

LLL IV.ii.18

– to insert again my *haud credo* for a deer.

Յոլոֆերնեսի խոսքում տեղ գտած բոլոր բառերն ունեն ոճական երանգավորում: Յոլոֆերնեսը պահանջկոտ լատիներենի ուսուցիչ է, որը մի բան ասելուց առաջ բազմիցս մտածում է: Յոլոֆերնեսի խոսքում **un-** նախածանցով բառերի թիվն ու ընտրությունը վկայում է ուսուցիչ խորը մետալեզվական իրազեկության մասին:

Յոլոֆերնեսի **un-** նախածանցով բառերին նախորդում է նմանօրինակ կառուցվածքով բառերի մեկ այլ շղթա՝ *intimation, insinuation, explication, replication, inclination*: Ընդ որում, խոսք ձեռք է բերում արտահայտիչ ռիթմ, որն ապահովում է ամբողջ խոսքի շարահյուսական ինքնաբերականությունը: Խոսքը սկսվում է Յոլոֆերնեսի հեգանական բացականչությամբ, **un-** նախածանցով բառերի միջոցով հասնում իր գագարնակետին և ավարտվում տոնի կտրուկ փոփոխությամբ: **Un-** նախածանցով սկսվող 7 բառերից *uneducated*-ը ուիշամիզմ է: Յոլոֆերնեսը ոճականորեն հմուտ, բառերի հմաստը խորապես ընկալող, լեզվական բոլոր նրերանգներին իրազեկ շեքսափրյան ամենավառ կերպարներից մեկն է և անհատական ոճի ցայտուն դրսնորումներ ունի: Նրա ելույթները կենդանացնում են տեսարանը, և նրա վեհ ճոռոմաբանությունը (*bombast*) այնքան տպավորիչ է, որ կարողանում է շփոթեցնել Յոլոֆերնեսի գորուցակցին:

Un- նախածանցով բառերի մեջ ենթախումբ են կազմում Շեքսափիրի նորաբանական բայերը՝ ընդհանուր 62: Այս բայերն արտահայտում են գործողություններ, որոնք ֆիզիկապես անհնար է կատարել, ինչպես *unsay, unshout, unspeak, uncurse, unwash, unswear, undeaf, unsex, unkiss* և այլն:

Սակրեթի կինը մենախոսում է իր ապագա չար գործերի մասին և աղոթում, որպեսզի ազատվի մարդկային կարեկցանքի զգացումից:

LADY

- Mac.I.v.38 ... Come, you spirits
Mac.I.v.39 That tend on mortal thoughts, *unsex** me here
Mac.I.v.40 And fill me from the crown to the toe top-full
Mac.I.v.41 Of direst cruelty. Make thick my blood;

Նրա տպավորիչ խոսքի գագաթնակետը *unsex* բառն է, որը ուկիլիամիզմ է: Այստեղ Շեքսպիրը գործաօնում է 2 բառակազմական միջոց՝ փոխարկում և ածանցում: Մակրեթի կինը կարող էր վերոհիշյալի փոխարեն ասել: “Come you spirits/That tend on mortal thoughts, take away my sex here...”, կամ “Come you spirits/That tend on mortal thoughts, remove all my feminine qualities...” Մակրեթի կնոց խոսքը տարբեր ռիթմիկ տաղաչափական ոտնաչափերի փոփոխվող հաջորդականություն է նման իր հույզերին՝ ուրախ և տխուր, որը ձևավորել է նրա անհանգիստ մտքերը: Երկար շրջասույթը տաղաչափության հետ համահումչ չէր լինի: Այս նաև կնվազեցներ արտահայտնան թատերականությունը. սա, անկասկած, Մակրեթի կնոց ամենահայտնի խոսքն է: *Un* նախածանցը ինքնին օգնում է, որպեսզի ընկալենք Մակրեթի կնոց կերպարը, նրա ներսում փոթորկվող համար պայքարը՝ ոչնչացնելու իր կանացիությունն ու քնքշությունը և առնականացնելու իրեն: Դիեսի մեկ այլ հատվածում նա մտքեր է արտահայտում մայրությունը մերժելու և հարազատ զավակին սպանելու մասին (Mac I.vii.58), *unsex* բառը մտածելու տեղիք է տալիս Մակրեթ ընտանիքի զավակ չունենալու և Մակրեթի կնոց իրական զգացմունքների մասին: Ուստի *unsex*-ն ունի մի շարք գործառույթներ, մասնավորապես՝

- *հոգարտահայտչական գործառույթ՝* Մակրեթի կնոց հոգական վիճակի և տրամադրության առնչությամբ,
- *բանաստեղծական գործառույթ՝* կապված ամբողջ խոսքի տաղաչափական ազդեցության հետ,
- *համատեքստային գործառույթ՝* կապված նրա՝ կերպարանափոխման ցանկությամբ և ստեղծ բառի՝ ողջ պիեսի համար կերպարին հասկանալու առանցքային նշանակությամբ:

Բանաստեղծական գործառույթը հատկապես լիարժեք է իրացված, եթե Շեքսպիրը նկարագրում է իր հերոսուհիներին՝ Զուլիետին, Դեզրեմնային, Կլեոպատրային, Կրեսսիլյային, Իննընին և այլն:

“Սիմբելին” պիեսում Դավաճան Իաչինոն կրթուտ նկարագրում է Իննընի շուրբերը, մինչ նա հիմանում է քնած գեղեցկությամբ:

IACHIMO

- Cym II.ii.17 But kiss, one kiss! Rubies *unparagoned**,
Cym II.ii.18 How dearly they do't:

Սակայն միայն մեկ գործողություն առաջ Խաչիմոն արհամարհում է Փոստումուսի՝ Իննօքնի մասին գովեստմերը:

IACHIMO

Cym I.v.77 Either your *unparagoned** mistress is dead, or she's

Cym I.v.78 outrized by a trifle.

Unparagoned բառը Շեքսպիրի բոլոր պիեսներում օգտագործվում է միայն երկու անգամ՝ Խաչիմոյի խոսքում: Առաջին գործողության մեջ այս բառը արտահայտում է ծաղր, երկրորդ գործողության մեջ՝ իրական իհացմունք: Խաչիմոյի սուբյեկտիվությունն ու երկերեսանիությունը լեզվական իհանալի արտահայտություն են գտել: Այսպիսի յուրօրինակ կազմությունները խոսում են Շեքսպիրի խորը մետալեզվական իրագեկության, ինչպես նաև լեզվի, կերպարի և համատեքստի սերտ կապի մասին:

Բազմաթիվ *-ish* վերջածանցով ածականներ իրենց կիրառությունն են ստացել անգլերենի ակտիվ բառապաշտում, ինչպես օրինակ *foolish* (73), *hellish* (8), *knavish* (7), *womanish* (7), *currish* (5), *slavish* (5): Յաճախ կրկնվող կազմությունների կողմին, ինչպես *foolish-ն* է, Շեքսպիրը փորձառու կերպով օգտագործում է մի քանի *-ish* վերջածանցով բառեր, որոնք առանձնանում են իրենց ոճագործաբանական կատարելությամբ: *-ish* վերջածանցով ածականների գործաբանական ազդեցությունը Շեքսպիրի պիեսներում գլխավորապես բացատրվում է հարանշանակային բաղադրիչով: Այսպես, Շեքսպիրի ստեղծագործություններում *bookish* բառը կարելի է մեկնաբանել որպես և' բացասական, և' դրական հարանշանակություն ունեցող բառ, ինչը մեծապես կախված է պիեսի լայն համատեքստից: Ուստի, օրինակ, եթե Յագոն դիմում է Կասսիոյին ինչպես մեկին, որը գործնականում ոչինչ չփառի և ավելի շատ հիմնվում է միայն տեսական գիտելիքների վրա, կարելի է նկատել Յագոյի հեգնանքը և դժգոհությունը, քանի որ Օթելլոն գերադասել է Կասսիոյին որպես իր տեղակալ:

IAGO

- | | |
|------------|-----------------------------------------------------------|
| Oth I.i.23 | Nor the division of a battle knows |
| Oth I.i.24 | More than a spinster – unless the <i>bookish</i> theoric, |
| Oth I.i.25 | Wherein the toged consuls can propose |
| Oth I.i.26 | As masterly as he. |

Յաճատեքստից դուրս *bookish* theoric-ը ինքնին ցույց չի տալիս արհամարհանք կամ անհավանություն, այլ, ընդհակառակը, մատնանշում է մարդու իրագեկված, տեղեկացված լինելու հանգամանքը: Քիչ կարդացած լինելը սովորաբար համարվում է թերություն: Երկու գործողություն անց Յագոն ինքն է խոսում Օթելլոյի թեթևամիտ պատրաստականության մասին՝ այդքան հեշտորեն

համոզվելու իր կնոջ անհավատարմության մեջ, որը հիմնված է միայն Կասսիոյի զվարճալի պատասխանների վրա՝ կանխամտածված Յագոյի կողմից:

IAGO

Oh IV.i.101 And his *unbookish* jealousy must construe

Oth IV.i.102 Poor Cassio's smiles, gestures, and light behaviour

Oth IV.i.103 Quite in the wrong.

Յետևաբար, երկու համապատասխան օրինակները հակառակ իմաստներով, որոնք օգտագործվել են միևնույն կերպարի կողմից միևնույն արհամարհական ուժով, համատեքստին կենսունակություն են հաղորդում և սուբյեկտիվ հարանշանակության լայն հնարավորություն ստեղծում՝ ընդգծելով կերպարի սեփական շահը և առավելությունը: Յամապատասխանաբար երկու գործածություններն ել իրականացնում են **համատեքստային** և **հոլոգրատիկային** գործառույթ: Այստեղ համատեքստային երկինաստությունը դրական է մեկ գործառույթի դեպքում, երբ կիրավում է երկերեսանի կերպարի՝ Յագոյի կողմից:

-*Y*ածանցը անգերենում միշտ եղել է ամենագործում ածանցներից: Այն օգտագործվում է գոյականներից և ածականներից ածականներ կազմելու համար: *Ծերսափիրի* կողմից օգտագործված -*y* կազմությունները նոր են և տպավորիչ՝ շնորհիվ նորա՝ յուրահասուկ գոյականների հիմքերի ընտրության, պարզ իրենց կազմությամբ, ինչպես օրինակ *womby*, *vaulty*, *sphery*, *skyeys* և այլն: Սակայն վարպետորեն ստեղծված այդ կազմություններն են՝ հիմնված ածական + *y* կաղապարի վրա, որ դարձնում են *Ծերսափիրի* -*y* ածանցի կիրառումը հատկապես ակնառու: Ժամանակակից տեսությունները, թվում է, չեն ծավալվում նման կազմությունների շուրջ (օր. *rump* – *rumpry*, AC II.vii.11): -*Y* կազմությունները զլխավորապես իրականացնում են բանաստեղծական գործառույթ:

Յոթսպուրը ջանք չի խնայում բարկացնելու Գլենդուվերին՝ իր թշնամիների կենացնի սարսափին: Ծերացող լորդը փորձում է հանդարտություն պահպանել և մեղմորեն հիշեցնում է Երիտասարդ գինվորին, թե նա ինչ կարող է անել:

GLENDOWER

1H4 III.i.50 I can call spirits from the *vasty** deep.

Vasty միավորի իմաստը նույն է, ինչ *vast* բարինը, սակայն առաջինն ունի ուժգնացման հարանշանակություն: Այս տողը վերցված է չափածոյից, ինչպես և Գլենդուվերի մյուս խոսքերը: Ընտրելով -*y* ածանցը՝ *Ծերսափիրը* որոշում է ավելացնել լրացուցիչ անշեշտ վամկ: Եթե նա գույք *vast deep*, և իսկապես կան *vast* բարի 13 կիրառություններ որպես ածական, և 2 գործածություն որպես գոյական (բառը վերագրվում է 1575-85թ., Barnhart 2008), ապա կլինեին երկու

կողք կողքի շեշտված վանկեր: Բացի այդ, ածանցի բացակայությունը կդժվարեցներ բառերի արտասանությունը, բանի որ խուլ էին հաջորդում է ձայնեղ Ժ-Ա: Քրիստալը նտորում է՝ ինչու Շեքսպիրը այստեղ չի ընտրել մեկ այլ երկվաճկ ածական: Նա նշում է, որ immense, enormous և massive բառերն այն ժամանակ ունեին կիրառություն, բայց առաջին երկուսն ունեին սխալ ռիթմ, իսկ վերջինը՝ սխալ իմաստ, ուստի Շեքսպիրը գործարանական լուծում է տվել: «Բարաստեղծման այս ձևն անենուրեք կիրառվել է այն ժամանակ», - նշում է Քրիստալը (Crystal 2008: 150⁸):

Երրորդ զիշում նաև վերլուծված են բարդ բառերի տարրեր օրինակներ՝ կառուցվածքային, գործառույթային, շարակյուսական տեսակետից; Կենտրոնախույս բարդ բառերը գերակշռում են Շեքսպիրի պիեսներում: Համաձայն Քրիստալի ուիլիամիզմների ցուցակի՝ Շեքսպիրն առաջինն է, որ օգտագործել է այնպիսի ծանոթ բառդ բառեր, ինչպիսիք են birthplace, blue-eyed, green-eyed, masterpiece, lady-bird և այնպիսի վար և տպավորիչ բառդ բառեր, ինչպիսիք են fat-witted, deep-mouthed, hell-born, milk-livered, narrow-mouthed, bitter-sweetening, loose-wived և այլն: Նկատելի են բառեր, որոնք Շեքսպիրը շատ է գործանում որպես բարդ բառերի բաղադրիչ մաս (IC): Օրինակ՝ Շեքսպիրը գործածում է love բառը 2890 անգամ իր բոլոր քերականական ձևերով: www.shakespeareswords.com կայքից դուրս բերված վիճակագրությունը ցույց է տալիս, որ Շեքսպիրի պիեսներում կան լուս իմբրով 34 բառդ բառ (28-ը պիեսներում, 6-ը պոեմներում), որոնցից 9-ը ուիլիամիզմներ են: Love բաղադրիչով բարդ բառերը Շեքսպիրի ստեղծագործություններում բանաստեղծական գործառույթ են իրացնում, որոշ բառեր զուգահեռաբար՝ նաև հոլոգարտահայտչական գործառույթ:

Romeo and Juliet պիեսում, երբ երիտասարդ սիրահարները՝ միանգամայն անհամբեր և սպասումնեալով լի, սլանում են դեպի եկեղեցու խորանը, Ֆրայար Լորենսը արտօհայտում է չարագուշակ նախազգուշություն՝ ապագա դժբախտության հետ կապված, որին Ուոնեն քաջարար պատասխանում է.

ROMEO

RJ II.vi.6 Do thou but close our hands with holy words,

RJ II.vi.7 Then *love-devouring** death do what he dare –

Ուոնենի նորաբանության պատշաճ ընկալման համար հարկ է դիտարել love-devouring death բառակապակցությունը: Այստեղ կա “նահվան” ակնհայտ անձնավորում: Այս նորաբանական կազմությունը արտացոլում է պիեսի ամբողջ գաղափարը: Ուոնենի նիզախ մարտահրավերը “Then love-devouring death do

⁸ Crystal D. Think on My Words: Exploring Shakespeare's Language. Cambridge: CUP, 2008.

what he dare"-ը այն առանցքն է, որի շուրջ Շեքսպիրը ծավալում է պիեսը, այն որ Ուոմենի և Զուլիետի սիրո անկեղծությունը վեր են ամենակործանարար մահից, իրենց սերն է, որ հաղթահարում է մահը: Բառակապակցությունը հուզարտահայտչական գործառույթ է կատարում:

Որոշ բարդ բառերի բաղադրիչ մասերում ակնհայտ է իմաստային անհամատեղելիություն: Նման բարդ բառերում ակնհայտ հակադրությունը (antithesis) ստեղծում է իմաստային երկիմաստություն, որը բացահայտվում է նեղ կամ լայն համատեքստում: Սամոնը անվանում է հակադրության կամ բառախանդի նպատակով գործածված նման կազմությունները հուզորական նորաբանություններ (rhetorical neologisms⁹) և նշում, որ դրանք ավելի հատկանշական են Շեքսպիրի վաղ ոճին (early style): Այստեղ եւտ շարկապը կարելի է մտովի ավելացնել՝ վեր հանելու բարդ բառերի բաղադրիչ մասերի իմաստային հակադրությունը խորքային կառուցվածքում: Բացի հուզարտահայտչական գործառույթից, նման կազմություններն ունեն նաև բառախանդական երանգ: Բառախանդական գործառույթն ի հայտ է գալիս նման կազմությունների հականիշության մեջ:

A Midsummer Night's Dream պիեսում Յելենան՝ ապշած Լայսանդերի սիրո խոստովանությունից, բացականչում է.

HELENA

MND III.ii.129 When truth kills truth, O *devilish-holy* fray!

MND III.ii.130 These vows are Hermia's. Will you give her o'er?

Դժվար է ասել, թե Յելենի խոսքում օգտագործված *devilish-holy* fray արտահայտությունը ինչին է վերաբերում: Միգուց նա խոսում է ճշմարտության սուրբ բնույթի և Լայսանդերի սատանայական գրաբարտության մասին, կամ սիրո սրբության մասին, և թե ինպես Լայսանդերը այն «սատանայաբար» քայլացեց: Իմաստի մեկնաբանությունը պայմանավորված է նրանով, թե արյոյո մենք ընթերցու՞մ ենք Յելենայի խոսքում կիրառված *devilish-holy* fray արտահայտությունը առաջին տողի, թե երկրորդ տողի հետ: Սակայն դա կարող է նաև վերաբերել իր ներկային, այն վեճերին, որոնք, ըստ նրա, միտված էին ծաղրելու իրեն: Այս դեպքում *devilish* բառը վերաբերում է Լայսանդերի և Ղեմետրիուսի դաժան վերաբերմունքին և իր հանդեպ ծաղրին, իսկ *holy*-ն կարող է վերաբերել Ղեմետրիուսից սիրո խոստովանություն լսելու իր փայփայած երազանքին:

Զնայած մեկնաբանության բազմազանությանը՝ ամբողջ խորքային իմաստն հետևյալն է՝ «սատանայական, բայց սուրբ»: Յնարավոր է նաև դա

⁹ Salmon V. Some Functions of Shakespearian Word-Formation // Shakespeare and Language. ed. Catherine M. S. Alexander. Cambridge: CUP, 2004.

Անթերցել վերոնշյալ բոլոր նշանակություններով հանդերձ, իհարկե, բոլոր դեպքերում էլ ակնհայտ է լինելու Քելենայի՝ տվյալ պահին ունեցած հոգեկան վրդրվածությունը: Ծեքսափիրի ստեղծագործություններում տեղ գտած այսպիսի լեզվական հնարների կիրառությունը բազմաթիվ մեկնաբանությունների տեղիք է տալիս և դեռ բացահայտելու նոր ուղիներ բացում բազմաթիվ սերունդների առջև:

Մեկ այլ օրինակ է All's Well That Ends Well ստեղծագործության մեջ Բերթրամի խոսքն՝ ուղղված Դիանային՝ Վերջինիս գայթակղությանը դիմադրելու վերաբերյալ.

BERTRAM

AW IV.ii.32 Be not so *holy-cruel*. Love is holy,

AW IV.ii.33 And my integrity ne'er knew the crafts

AW IV.ii.34 That you do charge men with. Stand no more off,

Այստեղ դարձյալ նկատելի է անհամատեղելի և հակադիր իհամատների կիրառություն: Բերթրամը Դիանային համեմատում է աստվածների հետ. նրանք սուրբ են, բայց երբեմն դաժան: Սակայն ինքը համբերատար է աղջկա հանդեպ, սուրբը կարող է հոնանիշ լինել կատարյալին: Բերթրամը խնդրում է նրան դաժան չլինել, քանզի դաժանությունն անհամատեղելի է կատարելության հետ: Այստեղ կա նաև ակնհայտ ակնարկ աստվածուին Դիանայի՝ Արտեմիսի մասին: Այսպիսով, Բերթրամը գործի է դնում իր հետորական ծիրքը՝ փիլիսոփայելով սիրո սրբության մասին, որպեսզի գայթակղի աղջկան:

Ամփոփելով սույն ատեմախոսության արդյունքները՝ կարելի է ամել հետևյալ եզրակացությունները.

1. Ծեքսափիրի բառակազմական միջոցների արժեքը գուտ ծևաբանական չէ: Դրանք տարբեր իհամատային, տաղաչափական, շարահյուսական, հնչյունաբանական և մետածևաբանական գործնքացների խառնուրդ են: Դանապատասխանաբար հնարավոր է դարձել տարբեր կազմությունների մեջ առանձնացնելու նշված մակարդակներից յուրաքանչյուրը:

2. Ծեքսափիրի նորարարական կազմություններում հինգ ոճագործաբանական գործառույթները՝ համատեքստույիշներ, հոլոգրատահայտչական, գեղագիտական, մետալեզվական, բառախաղային, առկա են հավասարաշափ, թեև տարբեր հնարներում ներկայանում են փոփոխվող համամասնությանը և տարաբաշխությանը:

համատեքստույիշն գործառույթ 16%

հոլոգրատահայտչական գործառույթ 32%

բառամաստեղծական գործառույթ 17%

մետալեզվական գործառույթ 15%

բառախաղային գործառույթ 20%

3. Ծեքսպիրի փոխարկումների, ածանցյալ և բարդ բառերի մեջ մասը ուլլյամիզմներ են՝ Ծեքսպիրյան նորաբանություններ: Սակայն Ծեքսպիրի բառակազմական միջոցների կիրառման ոճագործաբանական ազդեցությունը կախված չէ դրանց նորաբանական կարգավիճակի առկայությունից կամ բացակայությունից: Ծեքսպիրի փոխարկումների, ածանցյալ և բարդ բառերի մեջ մասը համատեքստում դիպվածային կազմություններ են՝ անկախ այն փաստից, թե արդյոք դրանք առաջին անգամ Ծեքսպիրն է օգտագործել:
4. Ծեքսպիրը հաճախ է կիրառում նորաբանություններ մոտավորապես միևնույն ժամանակ կամ մի քանի տարի տարբերությամբ գրված պիեսներում և երբեք միևնույն բառը որևէ այլ տեղում չի օգտագործում: Սա վկայում է Ծեքսպիրի մետալեզվական սուր գգացողության և լեզվամտածողության նաև:
5. Յակառակ շեքսպիրագիտության մեջ ընդունված տեսակետին՝ հատուկ տաղաչափության պահանջներին համապատասխանության նպատակով օգտագործված կազմությունները Ծեքսպիրի պիեսներում հաճախ հարանշանակային յուրօրիհնակ իմաստներ ունեն:
6. Փոխարկման, ածանցավոր և բարդ բառերի յուրօրիհնակ գործածության շնորհիվ Ծեքսպիրը կերտում է կերպարի հիփոլեկտը: Նրա կերպարներից շատերը, ինչպես Յամլետը, Յոլոֆերնեսը, Ֆոլստաֆը, Բեատրիսը, Դոն Արմադոն և ուրիշներ, հիշարժան են իենց իրենց մետալեզվական իրազեկության շնորհիվ:
7. Ծեքսպիրի որոշ պիեսներում բառակազմական միջոցների և լեզվախաղի կապը ավելի ցայտուն է արտահայտված, ինչպես The Merry Wives of Windsor, The Two Gentlemen of Verona, The Comedy of Errors և Love's Labour's Lost. Լեզուն, որպես այդպիսին, այս ստեղծագործությունների թեմաներից մեկն է: Զարմանալի չէ, որ “linguist” բառը առաջին անգամ օգտագործվել է Ծեքսպիրի կողմից՝ The Two Gentlemen of Verona պիեսում:

Այսպիսով, Ծեքսպիրի ստեղծագործությունների ոճագործաբանական արժեքը պայմանավորված է հեղինակի կողմից լայնորեն կիրառվող բառախաղով, նրա մետալեզվական իրազեկությամբ և հեղինակային ինքնատիպ բառաստեղծմանը:

Աշխատանքի հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ իրապարակումներում.

1. The Multi-Dimensional Perspective of the Suffix *-y* in Shakespeare's Plays // «Կանքեղ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Ասողիկ» հրատ., 2008, 2/43, էջ 156-165:
2. The Semantic Properties of *-ish* Formations in Shakespeare's Plays // «Բանբեր» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Լինզվա» հրատ., 2012, 1/21, էջ 226 - 239:
3. The Pragmatic Effects of Shakespeare's Word-Formation Techniques // «Լեզու, մշակույթ, հասարակություն» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, «Լինզվա» հրատ., 2012, 1/2, էջ 66 - 72:

АНИ ОГАННЕСОВНА МАРТИРОСЯН

**ПРАГМАСТИЛИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ
СЛОВООБРАЗОВАТЕЛЬНЫХ СРЕДСТВ В ПЬЕСАХ У. ШЕКСПИРА**

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук
по специальности 10.02.07 "Германские языки"

Защита состоится 20-ого декабря 2013г. в 11:00 на заседании специализированного совета 009 ВАК РА, действующего при Ереванском государственном университете.

Резюме

Реферируемая диссертация посвящена исследованию прагмалистических особенностей словообразовательных средств в пьесах У. Шекспира. **Актуальность темы** исследования определяется тем, что в работе осуществляется междисциплинарный подход, предполагающий комплексное рассмотрение изучаемых отрезков текстов в различных лингвистических аспектах, что позволяет полнее и всестороннее раскрыть сущность анализируемых явлений и выявить их непосредственное влияние на восприятие и интерпретацию текста.

Целью настоящей работы является выработка принципов прагмалистической интерпретации языковых единиц на уровне словообразования и определение стратегии их использования в произведениях У. Шекспира.

В соответствии с поставленной целью определены следующие **задачи** исследования:

1. исследовать труды, посвященные рассмотрению стилистического и прагматического аспектов словообразования английского языка советских и зарубежных лингвистов;
2. выявить особенности языка и стиля произведений У. Шекспира в литературном, театральном, социальном и историческом контексте эпохи Шекспира;
3. проанализировать функционирование словообразовательных средств на разных уровнях языка и провести дифференциацию между стилистическими окказионализмами и авторскими новообразованиями;
4. рассмотреть примеры реализации и специфику функционирования языковой игры в пьесах У. Шекспира;
5. разработать основные прагмалистические функции словообразовательных средств, которые обеспечивают прагматический эффект окказионализмов и неологизмов в произведениях Шекспира;

6. выявить прагматистический потенциал словообразовательных средств и проанализировать примеры конверсии, аффиксации и словосложения во всех 39 пьесах Шекспира.

Научная новизна настоящей работы обусловливается тем, что впервые проводится прагматистический анализ функционирования словообразовательных средств и особенностей их реализации в произведениях Шекспира.

Теоретическая значимость исследования заключается в том, что в нем впервые разрабатываются принципы комплексного прагматистического анализа на словообразовательном уровне. Установление корреляций между словообразовательными, прагматическими характеристиками новообразований в языке произведений Шекспира восполняет определенный пробел, который существует в словообразовании в плане его стилистических и прагматических аспектов.

Практическая значимость диссертации обусловлена тем, что результаты, полученные в данной работе могут быть применены в курсах лексикологии английского языка, а также в практических курсах по языку и стилю У. Шекспира.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложения.

Во **Введении** обосновывается актуальность темы диссертации, ее научная новизна, определяются ее цели и задачи, объект, предмет и методы исследования, структура, теоретические и методологические основы данной работы, излагается теоретическая и практическая ценность диссертации.

В **первой главе** представлен обзор основных направлений в области словообразования, обосновываются исходные теоретические положения, определяющие направление и методологические принципы анализа.

Вторая глава посвящена рассмотрению лингвистических и литературных традиций эпохи У. Шекспира. С целью более глубокого анализа языка и стиля произведений Шекспира проведен исторический экскурс в эпоху того времени.

Третья глава посвящена изучению механизмов реализации и актуализации прагматистического потенциала словообразовательных средств в произведениях У. Шекспира. Проводится тщательный анализ таких продуктивных словообразовательных средств, как конверсия, аффиксация и словосложение.

В **Заключении** обобщаются результаты исследования.

Изучение прагматистических особенностей словообразовательных средств в произведениях У. Шекспира позволяет сделать вывод о многообразии и своеобразии их функционирования в анализируемых произведениях, что свидетельствует о высоком творческом потенциале новообразований в языке произведений У. Шекспира.

ANI HOVHANNES MARTIROSYAN

**THE PRAGMASTYLISTIC DIMENSION OF WORD-FORMATION
TECHNIQUES IN SHAKESPEARE'S PLAYS**

Dissertation presented for the degree of Candidate of Philology
Specialty: 10.02.07 - Germanic Languages

The defence of the dissertation will take place on the 20th of December, 2013
at 11 a.m. at Yerevan State University.

Abstract

The thesis explores the pragmastylistic dimension of conversion (functional shifts), affixed and compound words in Shakespeare's plays. The **topicality** of the research is that it meets the needs of the multi-perspective scholarly directions which today are recognisably preferable in approaching Shakespeare's texture and is a relevant contribution to the linguistic-literary studies of Shakespeare's lexical innovations.

The **aim** of the present research is to explore Shakespeare's word-formation techniques in order to understand how single powerful instances contribute to the pragmatic effect of his language. To attain this aim, we have set out the following **objectives**:

1. To review the methods of investigation and the approaches to word-formation in linguistic theories by Soviet and Western linguists;
2. To comment on Shakespeare's texture, language and style within his original framework of literary, theatrical, social and historical import;
3. To identify the *language levels* in word-formation techniques as manipulated by Shakespeare and ranging from *situational creativity* to *high productivity* across the canon;
4. To expand on the *ludic* dimension of Shakespeare's word-formation techniques as a language means serving Ludic Linguistics on the one hand, and performing a *ludic function* for a playful effect in the context, on the other hand;
5. To work out the main *functions* of Shakespeare's word-formation techniques which guarantee the pragmatic effect of Shakespeare's innovative formations;
6. To expose the pragmastylistic dimension of Shakespeare's word-formation techniques through an interdisciplinary analysis of conversion, affixed and compound words excerpted from Shakespeare's canon of the whole of 39 plays.

The research **subject** is Shakespeare's use of word-formation techniques as viewed from a pragmastylistic perspective, with a focus on the language levels, pragmastylistic functions and the ludic dimension of Shakespearean word-formation. Accordingly, the **research source data** is Shakespeare's rich texture. For the purposes of the present research, we analyse 811 creative formations as occurred in Shakespeare's plays.

The study of Shakespeare's *word-formation* hitherto has tended to focus on the structural characteristics of his neologisms or their etymological history. The **scientific novelty** of the present research is that it examines *word-formation* from the *pragmastylistic* perspective. The aim of the pragmastylistic approach is to focus on the pragmatic effect of Shakespeare's word-formation techniques by identifying the *pragmastylistic functions* of his innovative usages and coinages. The present research also expands on the ludic dimension of word-formation in Shakespeare's plays, whereas before the intimate interlock between word-formation and Ludic Linguistics has rarely been investigated in depth as a single process of linguistic creativity in Shakespeare's works.

The **theoretical value** of the present research is that it is a comprehensive analysis of word-formation techniques as used by Shakespeare through the prism of current multi-disciplinary approaches, like the stylistic, pragmatic, linguistic-literary dimensions. The **practical value** of the research is that the analysis can be used both in the courses of English lexicology and applied studies of Shakespeare's language and style.

The present work has the following **structure**: Introduction, three chapters, Conclusion, References, Appendices.

Introduction outlines the present dissertation in terms of its topicality, aim, objectives, subject, research source data, scientific novelty, methods, theoretical and practical value, structure, conclusion, references and appendices.

Chapter I reviews the different theories on English word-formation in Soviet and Western linguistics, the importance of the inter- and multi-disciplinary approaches current in modern linguistic studies and their productive applicability to word-formation. It outlines the five pragmastylistic functions of word-formation techniques in Shakespeare's plays. A detailed account is given on the methodological basis and criteria of recognising the originality of a formation.

Chapter II dwells on Shakespeare's language and styles and expands on the literary and linguistic traditions of his time for a better understanding of the merits of his language by placing him in his immediate historical and cultural context. The chapter also examines the ludic potential of Shakespeare's word-formation techniques and expands on the five language levels which underlie the innovative formations in Shakespeare's plays.

Chapter III analyses instances of functional shifts, affixed and compound words as occurred across the canon, examines the most representative patterns, identifies the language levels and the pragmastylistic functions of Shakespeare's word-formation techniques.

Conclusion summarises the results of the research exposed in the present dissertation.

